



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
13 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1096 -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ «Հայաստան Արցախ» հիմնադրամի միջոցով, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (71 տեղ /18 պալետ և 53 արկղ/, 15,800 կգ ընդհանուր քաշով, 299,279 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ, իսկ փոխադրման և այլ ծախսերը կազմում են 5,150 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, բեռի ցանկը կցվում է, Արարատյան Մ/Վ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Մ Ա Ս Ս Ա Ս ՈՒ Ց Ա Կ

71 տեղ /18 պալետ + 53 արկղ/, 15800 կգ. քաշով, 299279.00 ԱՄՆ դոլար արժեքով, իսկ ճանապարհախաղ կազմում է 5510.00 ԱՄՆ դոլար

N	Արարանքի Անվանումը	Քանակ հատ	Տեղ	Գրուտոր թիվ կգ.	Կրճեք *ԱՄՆ դոլար	Ծագման երկիր
1	Մատանի պլաստմանե /խաղալիք/	48384	1 պալետ	171.7	8980.00	Չինաստան
2	Մրոչ փայր դայր.	22000		294.3	9000.00	ԱՄՆ
3	Մազակալ /բլթով/	5400		43.7	21200.00	ԱՄՆ
4	Գործած գլխարկ	5754	1 պալետ	534.7	16200.00	Կամբոջա
5	Տնոր զսպանակով	5040		1229.4	10974.00	Հնդկաստան
6	Գիրք ներկերու	10178		1841	27144.00	ԱՄՆ
7	Կոշիկի կապեր կտորից	5184 զույգ	1 պալետ	159.8	7776.00	ԱՄՆ
8	Ռետին դայր.	31584		480.1	4603.00	Չինաստան
9	Քարտեր /խաղ/	162472		324	7800.00	ԱՄՆ
10	Կաշյուն թուղթ	13687	1 պալետ	545	5088.00	Չինաստան
11	Մատիտ հատարակ	19000		93.1	1150.00	Չինաստան
12	Գերակ ռետինե /խաղալիք/	5016		135.8	2550.00	Չինաստան
13	Մազերի զարդաթել	-	1 պալետ	190.1	10080.00	Թայլանդ
14	Գրիչ գնդիկավոր	21522	1 պալետ	220	21961.00	Ճապոնիա
15	Պլաստման գերլան կնոց /ջրակայուն/ /ayline	10224		665	15224.00	Չինաստան
16	Մրիչ մատիտի	15458		74.6	4649.00	Չինաստան
17	Մազակալ /մետաղից/	1512	1 պալետ	30.3	7850.00	Կորեա
20	Բաժակ պլաստմանե /խաղալիք/	10560		330	10560.00	ԱՄՆ

21	Շամպուն /Pantene PRO-v/	-	1 պալետ	98	1450.00	ԱՄՆ
22	Բերանի խոռոչի ողողման հեղուկ /Colgate/	-		249.4	3900.00	ԱՄՆ
23	Պլաստմասե խաղալիք /ափսե/	5120		101.6	1500.00	ԱՄՆ
24	Ցուղամատիտ	87552		580	3900.00	Չինաստան
25	Մկրատ դպր.	8184	1 պալետ	211.6	5600.00	Չինաստան
26	Ձեռնոց գործած	9000 զույգ		325	4200.00	Չինաստան
27	Թելեր	-		128	1200.00	ԱՄՆ
26	Ատամի մածուկ /Freshmax/ 181g	9936	3 պալետ	2326.6	11010.00	Չինաստան
27	Ատամի խոզանակ	9936		158.1	1500.00	Չինաստան
28	Գունավոր մատիտ	5990	1 պալետ	624	7640.00	Հնդկաստան
29	Նոթատետր /блокнот/	1980		254	8900.00	Չինաստան
30	Բիժուտերիա մանկ./մետաղից/	2080		64	3500.00	Չինաստան
31	Խաղալիք ավտոմեքենա /մետաղից/	5359		874	14700.00	Մալազիա
32	Մտվարաթղթե ձևվածք	-	5 պալետ	2250	19290.00	ԱՄՆ
18	Մազակալ արհեստական մազից /շիկոն/	480	10 արկղ	64.1	2200.00	Չինաստան
19	Ժապավեն գունավոր	5160	43 արկղ	129	16000.00	
	ԸՆԴԱՄԵՆԸ	543752	71	15800	299279.00	

բեռը մաքսագերծվելու է Արարատյան Մաքսատուն –Վարչություն





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**13 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1097 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ - 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Առողջ կյանքի ուղի»)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված և ներմուծված բերի (90 տեղ, 4,050 կգ ընդհանուր քաշով, 13,410 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 1,500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա և 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 դեկտեմբեր 2017 թվականի N Մ - 1098 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախատպագրական, տպագրական և այլ պոլիգրաֆիական ծառայությունների մատուցում՝ 12,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


14 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1099 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրոտանիվը (42 կգ ընդհանուր քաշով, 10,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 66,000 դրամ, ԵՏՄ բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի N Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1100-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմ-
բերի 13-ի համաձայնեցման թերթը, որ ո ղ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրան-
ները (78,440 կգ քաշով, 40,215.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ,
փոխադրման ծախսերը կազմել են 2,302,159 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի
վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշ-
մամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ)
ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1101-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-1273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմ-
բերի 13-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրան-
ները (32,555 կգ քաշով, 16,315.27 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ,
փոխադրման ծախսերը կազմել են 938,561 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից
իրականացվող «Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում» ծրագրի
մասին» N Մ-1273-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1082-Ա
որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1102-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմ-
բերի 13-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկկող-
մանի ինքնակաշուն ժապավենները (20 հատ, 2.54 կգ ընդհանուր քաշով, 179.80 ԱՄՆ-ի
դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 13 ԱՄՆ-ի
դոլար, «Արևմտյան» ՄՎ), 18,600 հատ փոքրիկ դեկորատիվ տոնածառը և 8000 հատ
սիլիկոնե թևկապը (14 տեղ, 226 կգ ընդհանուր քաշով, 9,638 ԱՄՆ-ի դոլարին համարժեք
դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,260 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը,
«Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի
«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնո-
լոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվա-
կանի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշուման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1103 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի հոկտեմբերի 13-ի համաձայնեցման թերթը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 1/17.3/14302-17 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Բաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ISDO) կողմից, որպես մարդասիրական օգնություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ուղարկված գույք-սարքավորումների (5,007 կգ ընդհանուր քաշով, 5,000 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Ի լրումն մեր 2017 թվականի դեկտեմբերի 21-ի
N 15/15.1/27947-17 ելիցի

26 դեկտեմբերի 2017թ.

No 15/15.1/28386-17

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի
Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված
բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-1103-Ա որոշման 1-ի կետում «5,007 կգ ընդհանուր
քաշով» բառերը փոխարինել «6,360 կգ ընդհանուր քաշով» բառերով:



Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1104-Ա
քաղ. երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱ-
ՆԱԳՎՈՂ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՆԿԱԳՐԱՐՏԵԶ-
ՆԵՐԻՆ ՔԱՂՏՐԱՎԵՆԻՔԻ ՏՐԱՄԱՂՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 6,420,031 դրամ ընդհանուր արժու-ղությամբ «Լոռու մարզի դպրոցներին և մանկապարտեզներին քաղցրավենիքի տրամա-դրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-տակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանա-գրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականաց-ման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2017 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղցրավենիքի մատա-կարարում՝ 3,446,698 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01241801) 2017 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ թիվ 12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղցրավենիքի մատակարարում՝ 2,673,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված ժամկետում հիմնադրամի ներկայացուցչության և Հանրապետության կառավարության բարե-գործական ծրագրերի հանձնաժողովի ներկայացնել ամփոփ տեղեկություն-ներ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի կառավարության կառավարության աղընթեր պետական եկա-մուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, Ստեփանավանի և Տաշիրի քաղաքապետներին՝




ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է


«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
նախագահի կողմից
(արձանագրության թիվ 15/17)
«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
կողմից կնքված 2017թ.
հիմնադրամի կողմից կատարված
մշտական վարչական



«Լոռու մարզի դպրոցներին և մանկապարտեզներին քաղցրավենիքի տրամադրում» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Լոռու մարզում աղցիւ-տնտեսական ծանր իրավիճակը, արքատության բարձր շեմն ու երեխաների սննդակարգում քաղցրավենիքի ցածր մակարդակը, հիմք ընդունելով տարածաշրջանի դպրոցներին ու մանկապարտեզներին քաղցրավենիք տրամադրելու անհրաժեշտությունը:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտավորվածությունների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, մշակույթի բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	6 420 031 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր, Ստեփանավան քաղաքների և հարակից գյուղերի մանկապարտեզների սանձը, 1-ից 4-րդ դասարանի երեխաները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Փաթեթավորված տուփերի ձեռքբերում և բաշխում՝ 6 120 031 դրամ, 2. կազմակերպչական ծախսեր՝ 300,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 25.12.2018թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է կոնֆետներով տուփերի ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ: 1. Գրանդ Քենդի ՄՊԸ-ից կոնֆետներով տուփերի ձեռքբերում՝ 3 446 698 դրամ, 2. Էլիտ Շանթ ՄՊԸ-ից կոնֆետներով տուփերի ձեռքբերում՝ 2 673 333 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսվում է 300,000 դրամի չափով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզի Տաշիռ և Ստեփանավան քաղաքների համայնքապետարաններ, տարածքային խմբակային կառույցներ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ Լոռու մարզի Տաշիռ և Ստեփանավան քաղաքների համայնքապետարանի հրահանգներով, ծախսերի մասնաշաղկապի օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոսանքային հաշիվների վարկից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի ՀՀ մարմիններին՝ համապետության կառավարության բարեգործական ծրագրերի համաձայնագրով սահմանված ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1105 - Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ «ՓՅՈՒՆԻԿ» ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍՏԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 8-ի համաձայնեցման թերթը, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (2,576.40 կգ քաշով, 13,705 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 5,075 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների երկուստեք:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՑԱՆԿ

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված մարդասիրական օգնության բեռի

N	ԱՆՎԱՆՈՒՄ	Կտորների քանակը	Քաշը (կգ)	Արժեքը (ԱՄՆ դոլար)
1.	Մուրճ սարքելու սարք, խաղեր, լույսեր, լապտերներ	6	81,65	1755
2.	Փշովի լողավազան, ձեռքի աշխատանքի կյութեր, հագուստ	20	181,44	1680
3.	Բազմոց	2	113,4	650
4.	Կոշիկ	159	2199,96	9620
5.	ԸՆԴԱՄԵՆԸ	187	2576,4	13705

Հակոբ Արթուրյան

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»
ՀՀ նախագահ



**«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»
հասարակական կազմակերպության հասցեով ստացված
մարդասիրական օգնության բաշխումը**

Հայաստան - Արցախ հիմնադրամի կողմից ստացված մարդասիրական օգնությունը պլանավորել ենք բաշխել հետևյալ կերպ.


	ԱՆՎԱՆՈՒՄ	Բաշխումը
1.	Սուրճ սարքելու սարք, խաղեր, լույսեր, լապտերներ	«Փյունիկի» Երևանի և Գյումրիի գրասենյակ, Երևանի և Գյումրիի հաշմանդամ երեխաներ
2.	Փչովի լողավազան, ձեռքի աշխատանքի նյութեր, հագուստ	«Փյունիկի» Երևանի և Գյումրիի գրասենյակ, Երևանի և Գյումրիի հաշմանդամ երեխաներ
3.	Բազմոց	«Փյունիկի» Երևանի գրասենյակ
4.	Կոշիկ	Երևանի, Գյումրիի, Մարալիկի, Վանաձորի, Արթիկի, Արմավիրի, ինչպես նաև սահմանամերձ գյուղերի երեխաների տասարդներ:



Հակոբ Աբրահամյան

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»

ՀԿ նախագահ




Ի լրումն մեր 2017 թվականի դեկտեմբերի 22-ի
N 15/15.1/27989-17 ելիցի

29 դեկտեմբերի 2017թ.

No 15/15.1/28602-17

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» N Մ-1105-Ա որոշման 1-ի կետում «2,576.40 կգ քաշով» բառերը փոխարինել «3,160.00 կգ քաշով» բառերով: Կցված են խմբագրված բեռի և բաշխման ցանկերը:



ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

**«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»
հասարակական կազմակերպության հասցեով ստացված
մարդասիրական օգնության բաշխումը**



Հայաստան - Արցախի հիմնադրամի կողմից ստացված մարդասիրական
օգնությունը պլանավորել ենք բաշխել հետևյալ կերպ.

	ԱՆՎԱՆՈՒՄ	Բաշխումը
1.	Սուրճ սարքելու սարքեր, խաղեր, լույսեր, լապտերներ	«Փյունիկի» Երևանի և Գյումրիի գրասենյակ, Երևանի և Գյումրիի հաշմանդամ երեխաներ
2.	Փչովի լողավազան, ձեռքի աշխատանքի նյութեր, հագուստ, հաշմանդամի էլեկտրական սայլակ	«Փյունիկի» Երևանի և Գյումրիի գրասենյակ, Երևանի և Գյումրիի հաշմանդամ երեխաներ
3.	Բազմոցներ	«Փյունիկի» Երևանի և Գյումրիի կենտրոն
4.	Կոշիկ	Երևանի, Գյումրիի, Մարալիկի, Վանաձորի, Արթիկի, Արմավիրի, ինչպես նաև սահմանամերձ գյուղերի երեխաներ և երիտասարդներ:

Հակոբ Արքայանյան

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»

ՀՀ նախագահ




ՑԱՆԿ

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված մարդասիրական օգնության բեռի

N	ԱՆՎԱՆՈՒՄ	Կտորների քանակը (հատ)	Միավորի Քաշը (կգ)	Ընդհանուր քաշը (կգ)	Միավորի արժեքը (ԱՄՆ դոլար)	Արժեքը (ԱՄՆ դոլար)
1.	սուրճ սարքելու սարք	23	0,8	18,40	35	805
2.	խաղեր	30	0,5	15	15	450
3.	լույսեր	2	4	8	50	100
4.	լապտերներ	5	1	5	30	150
5.	փշովի լողավազան,	4	-	120	1230	1230
6.	ձեռքի աշխատանքի կյութեր	2	6	12	50	100
7.	հագուստ	6	8	48	50	300
8.	բազմոց	3	60	180	150	450
9.	կոշիկ	1924	1,4	2693,6	5	9620
10.	հաշմանդամի էլեկտրական սալակ	1	60	60	500	500
11.	ԸՆԴԱՄԵՆԸ			3160	-	13705

Հակոբ Աբրահամյան

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն»
ՀԿ նախագահ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1106 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ «ԵԶՆԻԿ ՄՈՁՅԱՆ
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ
ԲԵՌՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 11-ի N 07/14-2/22990-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/14/22286-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/52425-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 12,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շուշի քաղաքի «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի համար բեռնատար մեքենայի ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Ֆորա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00084227) 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ford Transit VAN RWD 470 LWB EF մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 12,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել

հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-968-Ա որոշումը:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արմինա Վարդանյան

«07» դեկտեմբերի 2017թ.

**«Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի համար
բեռնատար մեքենայի ձեռքբերում»**

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Մի շարք շինարարական մասնագիտություններ ձեռքբերելու համար նախատեսված հատուկ արհեստանոցներում գործնական պրակտիկայի իրականացման ժամանակ օգտագործվող շինանյութի տեղափոխման անհրաժեշտությունից ելնելով, ապահովել Եզնիկ Մոզյանի ուսումնարանը բեռնատար մեքենայով: Ուսուցումն անցկացվում է բացառապես անվճար հիմունքներով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, Շուշի քաղաք, կրթության բնագավառ

2

6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 12.500.000,00 ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Շուշի քաղաքի «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի ուսանողները
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ նոյեմբերի 30-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մույն թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում բեռնատար մեքենայի ձեռքբերում և նվիրաբերում՝ 12.500.000,00 ՀՀ դրամ արժեքով:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ֆորա» ՄՊԸ-ից «Ford Tranzit VAN RWD 470 LWB EF» մակնիշի թվով մեկ հատ «Frozen White» գույնի VIN WF0XXXTTGXGD15104 ավտոմեքենայի ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 12.500.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության վերահսկողությունը իրականացվում է արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից (եռամսյա և կեսամսյա վերահսկողություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1107 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ
ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2-ՐԴ ՄԱՍՆԱԾԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/14-2/23581-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 02/14/22795-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 04/07-1/17814-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 15-ի N 06/3-8/53179-17 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/14.2/5034-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 129,828,300 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի 2-րդ մասնաշենքի վերաներոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վահագ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2017 թվականի նոյեմբերի 13-ին կնքված N ՀՀ/ԴՏ-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 127,878,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Մոդեռնիսացի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2017 թվականի նոյեմբերի 13-ին կնքված N ՀՀՏՀ-08/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2017 թվականի նոյեմբերի 13-ին կնքված N ՀՀ-08/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արմա Վարդանյան



«12» դեկտեմբերի 2017թ.


«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի 2-րդ մասնաշենքի վերանորոգում»
ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Բարելավել Օշական գյուղի դպրոցի ուսուցիչների և աշակերտների աշխատանքի և ուսման պայմանները
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական գյուղ, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 129.828.300,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը

2

8. Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ նոյեմբերի 13-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 13-ը
9. Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ նոյեմբերի 13-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 13-ը մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի վերանորոգման աշխատանքներ՝ շինարարություն – 127.878.300,00 դրամ հեղինակային հսկողություն – 750.000,00 դրամ տեխնիկական հսկողություն – 1.200.000,00 դրամ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՎԱՅԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Օշական գյուղի դպրոցի 2-րդ մասնաշենքի (մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ) վերանորոգում 127.878.300,00 դրամ առանց ԱԱՀ-ի «Մոդեռնիսացիա» ՍՊԸ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում 1.200.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում 750.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզի կառավարման մարմնի հետ
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արագածոտնի մարզի կառավարման մարմնի կողմից վերահսկողություն իրականացվելու է համագործակցության ծրագրերի համակարգման (եռամսյակային եւ ամիսով)

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինա Դարբինյանը





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1108 -Ա
քաղ. երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ՎԱՆԱՃՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ
ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 01.1/14-2/22849-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 02/14/22414-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N ԱՊ/ԱՆՄ-2-1/13024-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54193-17 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի N 101/104.3.2/6264-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական դրակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 81,975,500 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված N 4100004130122004271 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 510100708 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Սպարապետ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2017 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 17-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

աննդամաբերքի և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 17,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 03108134348 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Էլ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի նոյեմբերի 2-ին կնքված N 4-59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում և կարգաբերում՝ 99,778 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2017 թվականի նոյեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի ապրիլի 15-ը աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Լոռու մարզպետի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ Օգնության Ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

1.	Օրագրի նպատակը	Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում:
2.	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հեռախոսակապի, սպառած գազի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրաէներգիայի և տարեկան առողիտի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2018թ.-31.12.2018թ. ընթացքում:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ(Լյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գևորգ և Սիրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի
4.	Օրագրի կատարողը	«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցե՝ ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684
5.	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 81 975 500 ՀՀ դրամ :
7.	Բարեգործություն ստացողը	Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով ծերեր:
8.	Օրագրի իրականացման տևողությունը	01.01.2018թ – 31.12.2018թ, ծրագիրը շարունակական է:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, բազմառեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների իրականացում նրանց առօրյա հետաքրքիր դարձնելու համար, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում ողջ 2018թ տարվա ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում՝ 1. Տարեցների տանը բնակվող ծերերի համար նպաստավոր պայմանների ստեղծում

		• Կոմունալ և կապի ծառայության ծախսեր՝ - 8 567 750 ՀՀ դրամ • Ծեփի շահագործման և պահպանման ծախսեր՝ - 702 000 ՀՀ դրամ 2. Տարեցների խնամքի, հիգիենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում • Սննդի, տնտեսական ապրանքների ձեռք բերում - 18 337 500 ՀՀ դրամ • Հագուստի, անկողնային և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերում - 810 000 ՀՀ դրամ • Տարեցների տունն սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր - 2 466 000 ՀՀ դրամ • Խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) - 41 400 750 ՀՀ դրամ 3. Տարեցների առողջական վիճակի ամբողջական հետազոտությունների կազմակերպում, առաջնային բժշկական օգնության տրամադրում - 600 000 ՀՀ դրամ 4. Կազմակերպական ծախսեր - 9 091 500 ՀՀ դրամ
10.	Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ներդնիշյալ կազմակերպությունների կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների գծով ԱԱՀ-ից ազատում 1. Օգտագործված գազի դիմաց ԱԱՀ-ից ազատում 4 100 000 ՀՀ դրամի չափով 01.01.2018թ.-31.12.2018թ. ընթացքում /պայմանագիր N 03108134348, կնքված 01.08.2013թ. «Գազայրոմ Արմենիա» (Հայտնագազարդ) ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի (ք.Վանաձոր, Չուխաջյան 2/ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման և աշխատանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 99 778 ՀՀ դրամի չափով 10.01.2018թ.-10.01.2019թ. ընթացքում՝ պայմանագիր N 4-59, կնքված 02.11.2016թ «Էլ-Գ-Սերվիս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Աղոցի 10, ՀՎՀՀ 00930884) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: 2. Տարեցների և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 17 000 000 դրամի չափով 01.01.2018թ.-31.12.2018թ. ընթացքում՝ պայմանագիր N 17-01, կնքված 25.11.2017թ. Սպարապետ ՍՊԸ-ի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 0055002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: 3. Երազործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում 3 600 000 դրամի չափով 01.01.2018թ.-31.12.2018թ. ընթացքում՝ պայմանագիր N 4100004130122004271, կնքված 19.03.2008թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Էներգ մասնաճյուղի (ՀՀ, ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: 5. Հեռախոսակապի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 600 000 ՀՀ դրամի չափով 01.01.2018թ.-31.12.2018թ. ընթացքում՝ պայմանագիր N 510100708, կնքված 14.03.2008թ. «Վեռն Արմենիա» (Արմենիա) ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: 6. Առողիտի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 330 000 ՀՀ դրամի չափով 01.01.2018թ.-15.04.2018թ. ընթացքում՝ պայմանագիր կնքված 27.11.2017թ «Առողիտ Սերվիս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք.Երևան, Կարդանանց 18/1, ՀՎՀՀ 00419022) և Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: 7. Կից ներկայացվում են պայմանագրերի լուսապատճենները:



11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է - 9 091 500 ՀՀ դրամ , ծրագրի ընդհանուր արժողության 11.09 %-ը : Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ադմինիստրատիվ կազմի աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները, գործուղման, գրասենյակի համար անհրաժեշտ գրեական պիտույքների ձեռք բերման, համակարգչային սպասարկման, բանկային ծառայության և տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Լոռու մարզպետարան, Տեղական ինքնակառավարման մարմիններ
13.	Ծրագրի արդյունավետության բարձրացումը, ծրագրի արդյունքները կատարվելու է Ամերիկայի ՀՕՏ-ի Նյու Յորքի և Հայաստանյան գրասենյակի, «Վանաձորի տարեցների նկատմամբ վերահսկողություն» հիմնադրամի խորհրդի և եռամսյա, տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական մեխանիզմների կառավարության ծրագրի համակարգող հանձնաժողովի կողմից	



8/6/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1109 - Ա

քաղ. երևան


«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N 01.1/14-2/22832-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 11-ի N 06/3-8/52317-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված երկու հատ մոնիտորի (2 տեղ, 146.20 lbs ընդհանուր քաշով, 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 280 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Մոնիտորներն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության Հանրային հեռուստատեսությանը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1110 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N 01.1/14-2/23410-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 15-ի N 06/3-8/53190-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հեռուստատեխնիկայի (11 տեղ, 804.30 lbs ընդհանուր քաշով, 5,263 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,195 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Հեռուստատեխնիկական անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության Հանրային հեռուստատեսությանը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1111 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱԶՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի -ի N 01.1/14-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի և Միացյալ Նահանգներում բնակվող հաշմանդամների կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված՝ հաշմանդամների համար նախատեսված պարագաների (122 կգ քաշով, 2,500 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական և բարեգործական ճաշարաններին հաց մատակարարել, որի գումարը կազմում է 80.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Նկանակ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Արմավիրի մարզ, ք. Էջմիածնի Մայր Աթոռ, (ՀՎՀՀ 04725402), պայմանագիր կնքված 07 դեկտեմբեր, 2017թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 07 դեկտեմբեր, 2017 - 07 դեկտեմբեր, 2019 թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական և բարեգործական ճաշարանները ապահովել հացով, որի գումարը կազմում է 80.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն (ՀՀ ք. Էջմիածնի ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1175 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N ՕԼ.1/14-2/24227-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N ՕԶ.14/22939-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N ՕԶ.3-8/54380-17 եզրակացությունները, **հ որ ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 33,439,890 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միհրշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930335) 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N 17Ե/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պարսպի վերականգնման աշխատանքների իրականացում՝ 33,439,890 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների՝ ինչ որպեսզի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

Որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգման կառավարության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Սուշեղ Եսիսկիյան Բաբայան
15 դեկտեմբեր, 2017թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում

Ծ Ր Ա Գ Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ներսիսյան լճի արևմտյան պարսպի վերականգնման աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, եկեղեցաշինական :
6.	Ծրագրի բյուջեն	33,439,890 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբնությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	07 դեկտեմբեր 2017թ. - 01 հուլիս, 2018թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է վերականգնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ներսիսյան լճի արևմտյան պարսպի վերականգնման աշխատանքները, որի գումարը կազմում է 33,439,890 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Միհրշին» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Լոր-Մարաշ 17 փողոց, տուն 72 ՀՎՀՀ 009330335), պայմանագրեր կնքված 07.12.2017թ. 17Ե/017: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 07 դեկտեմբեր, 2017 –01 հուլիս, 2018 թ. :
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է վերականգնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ներսիսյան լճի արևմտյան պարսպի վերականգնման աշխատանքները, որի գումարը կազմում է 33,439,890 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում



Մ. 18/13

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:
-----	---	---



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 դեկտեմբեր 2017 թվականի N Մ - 1176 - Ա
քաղ. երևան

**«ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԵ ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ 2017-2020»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 01.1/14-2/23505-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 02/14/22796-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N ԱՊ/ԱՆԿ-2-1/13391-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N ՆՁ/22.2/15452-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-84/54376-17 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 14 ի N 101/104.32/6347-17 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Երուսաղեմի Սուրբ Ղազար Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 128,600 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն 2017-2020» ծրագիրը (կցվում է):

2. «Երուսաղեմի Սուրբ Ղազար Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումով հաստատվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Լոռու մարզպետի կողմից ներկայացված հաշմանդամներ և սոցիալապես անապահով անձինք:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Երուսաղեմի թշվական, Սուրբ Ղազարի Օրդենը
Հայաստանում» ԲՀ տնօրեն ժակին Շերինյանի կողմից

«Երուսաղեմի թշվական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» ԲՀ հասցեով բեռների ներմուծման ծրագիր
«Աջակցություն 2017-2020»

1	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի, մասնավորապես Լոռու մարզի թշվական, կրթական հաստատություններին և նախակրթարաններին թշվական սարքավորումներով, պարագաներով և գույքով հաճեցում, վերազինում, հաշմանդամներին և բնակչության առավել խոցելի խմբերին սոցիալ-առողջապահական, վերականգնողական աջակցություն:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով ակնկալվում են հարկային և մաքսային արտոնություններ:
3	Բարեգործ	Ֆրանսիայի «Մանաբալյան ինստիտուտ» ասոցիացիա /ոչ առևտրային կազմակերպություն Հասցեն - Ֆրանսիա, Մարսել, 13008 Լոռու փողոց 16 Հոլանդիայի «Stichting Bright Future» NGO Հասցեն Հոլանդիա, Ամստերդամումեկ 184 ա, 1182 Ամստերդամ «Երուսաղեմի թշվական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» ԲՀ Հասցեն ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Մարազան 9, ՀՀՀՀ 06943485 ՀՀ մարզեր, ՀՀ բուժ հաստատություններ՝ սոցիալ - առողջապահական:
4	Ծրագրի կատարողը	Ծրագրի բյուջեն կազմում է 128 600 եվրոյին համարժեք դրամ:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ բուժ հաստատություններ, սոցիալապես անապահով անձինք, հաշմանդամներ, մանավորապես Լոռու մարզից 6000 մարդ, այլ մարզերից՝ սոցիալական ծառայությունների կողմից ներկայացված հաշմանդամներ և սոցիալապես անապահով անձինք:
6	Ծրագրի բյուջեն	Սկիզբը - 25 դեկտեմբերի 2017թ
7	Բարեգործություն ստացողը	Ավարտը - 25 դեկտեմբերի 2020թ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	
9	Միջոցառումների նկարագրությունը, ժամկետները, անկախությունը, ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնականում նախատեսվում է ներմուծել բարեգործական բեռներ՝ նոր և օգտագործված հագուստ (սառնալու և տրամադրելու ենք միայն մեծահասակներին), թշվական սարքավորումներ և պարագաներ, վերականգնողական սարքեր և պարագաներ, մեկ

		ուղևորաբեռնատար մեքենա: Երեք տարվա կտրվածքով, ընդհանուր ծրագրի արժեքը կազմում է 128600 եվրոյի համարժեք դրամ: Ծրագիրը շարունակական է:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրությունը, ծավալները և նախատեսվող գինը	Հիմնականում նախատեսվում է ներմուծել բարեգործական բեռներ՝ օգտագործված հագուստ, բժշկական սարքավորումներ և պարագաներ, վերականգնողական սարքեր և պարագաներ, մեկ ուղևորաբեռնատար մեքենա: Երեք տարվա ընթացքում նախատեսվում է, ըստ նախնական պայմանավորվածությունների ներմուծել տարեկան չորս բարեգործական բեռ: Ներմուծվելու է մեկ ուղևորաբեռնատար մեքենա 2000 եվրո արժեքով՝ բեռները բաշխելու և հաշմանդամ շահառուների հետ աշխատելու նպատակով: Մեքենայի տարեկան սպասարկման համար նախատեսվում է վառելիքի ձեռք բերման և սպասարկման ծառայությունների համար 1200 եվրոյի համարժեք դրամ: Գրասենյակային տարեկան ծախսերը ներառում են՝ գրասենյակային պարագաներ, գրենական պիտույքներ ձեռք բերելու համար 1000 եվրոյի համարժեք դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Նախատեսված է ներմուծել մեկ ուղևորաբեռնատար մեքենա, արժեքը՝ 2000 եվրո, 1200 եվրո մեքենայի սպասարկման և 1000 եվրո գրասենյակային տարեկան ծախսեր: Երեք տարվա կտրվածքով գումարը կազմում է 8600 եվրոյի համարժեք դրամ: Ուղևորաբեռնատար մեքենան նախատեսված է շահառու հաշմանդամներին տեղափոխելու բուժ հաստատություններ, բժշկական գնումներ կատարելու, սոցիալապես անապահով անձանց համար նախատեսված հագուստները իրենց բնակավայրեր հասցնելու և բաշխելու, ինչպես նաև բժշկական սարքավորումները ՀՀ բուժ հաստատություններ տեղափոխելու նպատակով:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ժամանակ նախատեսվում է համագործակցություն ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտությաննա խարարությունների, Լոռու մարզպետարանի, համայնքապետարանների, Ֆրանսիայի «Մահաբայան ինստիտուտ» ասոցիացիայի և Հոլանդիայի «Stichting Bright Future» NGO կազմակերպությունների և անհատ բարերարների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության վերահսկողությունը կիրականացվի դոնորների՝ Ֆրանսիայի «Մահաբայան ինստիտուտ» և Հոլանդիայի «Stichting Bright Future» հիմնադրամ -ի կողմից, ինչպես նաև համագործակցության ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից, որոնց հաշվառմանը ենթարկվելու են հաշվետվությունները:

«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրհնոց»



Ժակլին Շեքիմյան

2017թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1177 -Ա
քաղ. երևան

**«ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N01.1/14-2/23901-17, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱՊ/ԱՆՄ-2-1/13399-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N06/3-8/54202-17 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 101/104.3.2/6519-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել, Հոլանդիայից՝ «Bright Future» հասարակական կազմակերպության կողմից «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (61 արկղ, 702 կգ, 3,000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսը կազմում է 1,200 եվրո, «Արևելյան» ՄԿ) ներմուծման ծրագիրը, շահառուների ցանկը կցվում է:

2. «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Լոռու մարզպետի և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



ԱՏԵՐՄԻՄՈՆՅԱՆ


N 16 / 18.10


Հոլանդիայի "Bright Future" կազմակերպության կողմից "Երուսաղեմի
բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում" ԲՀ հասցեով
ուղարկված օգտագործված հագուստի նախնական բաշխման

ՑԱՆԿ

N	Անուն Ազգանուն Հայրանուն	Բնակության հասցե	Անձերի թիվը
1	Աղամալյան Արայուշա Բալարեկի	Խնձորուտ 2 փող 2 նրբ, 15տ	5
2	Անտոնյան Սարգիս Մեդրակի	Տիգրանյան 1/47	3
3	Ավետիսյան Վաղոմիր Ժորայի	Տարոն 3 ԲՇՀ 12/20 բն	3
4	Աղբեկյան Արմեն Համբարձումի	Բաահակյան 1 նրբ 11/41	4
5	Բաղդասարյան Անարոն Վոլոդյայի	Ամիրյան 5/12	4
6	Գևորգյան Անարոն Իշխանի	գ. Արևածագ	4
7	Եղիկյան Մերուժան Ժորայի	Աղայան 59/1-24	1
8	Եսայան Աարարատ Մերյոժայի	Բաահակյան 1 նրբ 3/20	3
9	Խաչատրյան Գագիկ Աղասու	Մուխամի 6/14	3
10	Կարապետյան Վարդան Վարշամի	Տարոն 3 ԲՇՀ 7 29/9	4
11	Հովսեփյան Գերասիմ Վիգենի	Տարոն 4 աժիս 24/4	4
12	Դուկյան Լիպորիտ Աթաբեկի	Մյասնիկյան 4/17	3
13	Ղազարյան Գառնիկ Հայկազի	Տարոն 4 մեր 52 վ բն8	4
14	Մկրտչյան Սեդրակ Վաղինակի	Լալբաղյան նրբ 7	2
15	Շահնազարյան Գուրգեն Անուշավանի	Տարոն 2 ԲՇՀ 4, 15/9	3
16	Պետրոսյան Էդվարդ Յուրիկի	Մխիթար Հեղացու 7/7	3
17	Պողոսյան Մերգե Մուսայի	Տերյան 4/26	3
18	Ջահանգիրյան Գագիկ Վազգենի	Երևանյան խճ 70/17	3
19	Ջանիկյան Ռոբերտ Լևոնի	Բաահակյան 1 նրբ 3/12	5
20	Մահակյան Սպարտակ Մարտի	Գայի 73	4
21	Սարգսյան Մերյոժա Գալապետի	Տարոն 4 Կանակա 69/2	4
22	Մանվելյան Ավագ Մերյոժայի	Տարոն 2, 63/13	3
23	Մաքսյան Լևոն Դուրսունի	Բաահակյան 9/18	1
24	Քալաշյան Մամիկ Ռուբենի	Զորավար Անդրանիկի 60/21	3
25	Քարամյան Ռազմիկ Անուշավանի	Համբարձումյան 8/26	7
26	Ղևոնդյան Մովսես Մերյոժայի	Երև. խճ 64/23	2
27	Հովհաննիսյան Աշոտ Շալիկոյի	Մուխամի 2/26	5
28	Ավույան Սիսակ	գ. Խնձորուտ 6 փ	2
29	Թամազյան Գարեն Հրանտի	Մոսկովյան 10/3	2
30	*Մատար* ՀԿ		20 ընտանիք

Երուսաղեմի Բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում ԲՀ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1179 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N 01.1/14-2/22850-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի N 06/3-8/52314-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2017 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 102/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձոր քաղաքի, Իսահակյան 3 հասցեում գտնվող շենքի տանիքի հակասառնեցման, տաքացման և ձնարգելների տեղադրման աշխատանքների կատարում՝ 5,024,483.38 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբեր 2017 թվականի N Մ - 1180 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 01.1/14-2/23117-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի N 06/3-8/52445-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշման կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ծրագրի 10-րդ կետի և 11-րդ կետերում «Տպագրություններ, գրքեր - մոտ 105 000 000 /հարյուր հինգ միլիոն/ ՀՀ դրամ» բառերը փոխարինել «Տպագրությունների, գրքերի, ֆիլմերի, տեսահոլովակների, պաստառների, բուկլետների և օրացույցների պատրաստում - մոտ 105 000 000 /հարյուր հինգ միլիոն/ ՀՀ դրամ» բառերով:

2. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է վերոնշյալ որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543148) 2017 թվականի մայիսի 17-ին կնքված՝ N 033/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպության 100-ամյակին նվիրված ֆիլմի պատրաստման աշխատանքների կատարում՝ 3,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1181 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N01.1/14-2/23896-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 06/3-8/54033-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՅՋԻ ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02264064) 2017 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N 111/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1182 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N 01.1/14-2/22818-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի 12-ի N 06/3-8/52440-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Գերմանիայի Դաշնությունից՝ «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի միջոցով, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված կաթնախառնուրդն ու կաթնազերծ խառնուրդը (2,113տեղ, 18,760 հատ, 7,136.3 կգ ընդհանուր քաշով, 33,561,000 ՀՀ դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» Մ/Վ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1183 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ
«ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 01.1/14-2/24230-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/14/22930-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54378-17 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 13,220,730 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի ջրագծի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտեզիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04413813) 2017 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N 18Ը/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր ջրագծի անցկացման աշխատանքների իրականացում՝ 13,220,730 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ներկայացնելու մասին:

4. Սույն որոշումն ընդունել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Սուշեղ Էմիլիանյան Բաբայան
18 դեկտեմբեր, 2017թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի ջրագծի կառուցում

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար նոր ջրագծի անցկացումը աշխատանքները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Հիմնադրամ Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Եկեղեցաշինական
6.	Ծրագրի բյուջեն	13.220.730 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15 դեկտեմբեր, 2017- 15 դեկտեմբեր, 2018:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում՝ նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար նոր ջրագծի անցկացնել, որի գումարը կազմում է 13.220.730 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Արտեզիա» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Արմավիրի մարզ, ք. Էջմիածին Բաղրամյան փող. շենք 3 (ՀՎՀՀ 04413813), պայմանագիր 18Ը/017՝ կնքված 15 դեկտեմբեր, 2017թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 դեկտեմբեր, 2017 – 15 դեկտեմբեր, 2018 թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գները	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար նոր ջրագծի անցկացնել, որի գումարը կազմում է 13.220.730ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական և ճարտարապետական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կարվի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1184 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ՊԱՏԿԱՆ ՎԱՆՔՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 01.1/14-2/24043-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/23033-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54379-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 530,091,724 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերին 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 272,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N 08311157161 և N 08311157159 պայմանագրերով նշված գործարքները, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերին 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում


ընական գազի մատակարարում՝ 192,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N 01308 և 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07647 պայմանագրերով նշված գործարքները, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1,291,724 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված՝ N 151937099, N 151931107, N 151937102 և 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 150995043 պայմանագրերով նշված գործարքները, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 64,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բարսեղյան
19 դեկտեմբեր, 2017

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի և պատկան վանքերի տնտեսական պայմանագրերի բարելավում

Մ Ր Ա Գ Ի Ր

1	Օրագրի նպատակը	Օրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի և պատկան վանքերի՝ Սուրբ Գայանե, Սուրբ Հովհաննես, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերի, Սուրբ Գեղարդավանքի և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տնտեսական պայմանագրերի բարելավումը:
2	Օրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Օրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի մարզ Ք. Էջմիածին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Սուրբ Գայանե, Սուրբ Հովհաննես, Սուրբ Շողակաթ) ՀՀ Գոտայքի մարզ. սուրբ Գեղարդավանք, ՀՀ Արարատի մարզ, գ. Լուսառատ Սուր Խոր Վիրապ վանքային համալիր, ք. Երևան Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Տնտեսական:
6	Օրագրի բյուջեն	Օրագրի բյուջեն 530.091.724 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ 2018թ. 265.045.862 ՀՀ դրամ 2019թ. 265.045.862 ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը:
8	Օրագրի իրականացման տևողությունը	01 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր, 2019թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի և պատկան վանքերի՝ Սուրբ Գայանե, Սուրբ Հովհաննես, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերի, Սուրբ Գեղարդավանքի և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ապահովել խմելու ջրով, էլեկտրաէներգիայով, Գազով, Գազի տեխնիկական սպասարկումով: Էլեկտրաէներգիա մատակարարում- 272.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Գազի Մատակարարում- 192.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Գազի տեխնիկական սպասարկում -1.291.724 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Զուր-64.800.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ Ընդհանուր -530.091.724 ՀՀ դրամ առանց ԱԱՀ Օրագրի իրականացման տևողությունը 01 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր, 2019թ.:

10.



Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը

Նախատեսվում է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի և պատկան վանքերի՝ Սուրբ Գայանե, Սուրբ Հովհաննես, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքեր, Սուրբ Գեղարդավանքը և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ապահովել խմելու ջրով, էլեկտրաէներգիայով, Գազով, Գազի սպասարկումով և հեռախոսակապով:

Սուրբ Գայանե վանք

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.- 4.000.000 և 2019թ.- 4.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 8.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ. 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ 201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 0289979:

- Նախատեսվում է գազի մատակարարում 2018թ.- 6.000.000ՀՀ դրամ և 2019թ.- 6.000.000ՀՀ դրամ. ընդամենը 12.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), 10.11.2015թ. կնքված թիվ 08311157161 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 2018թ.- 307.170 ՀՀ դրամ և 2019թ.- 307.170 ՀՀ դրամ. ընդամենը 614.340 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ., (ՀՎՀՀ 00930884), 01.10.2017թ. կնքված թիվ 07647 պայմանագրի հիման վրա:

-Նախատեսվում է ջրի մատակարարում 2018թ.-800.000 ՀՀ դրամ և 2019թ.- 800.000 ՀՀ դրամ. ընդամենը 1.600.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ., (ՀՎՀՀ 02655115), 13.01.2017թ. կնքված թիվ 151937102 պայմանագրի հիման վրա:

Սուրբ Հովհաննես վանք

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.- 5.000.000 և 2019թ.- 5.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 10.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ. 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ 201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 0290228.:

-Նախատեսվում է ջրի մատակարարում 2018թ.-800.000 ՀՀ դրամ և 2019թ.- 800.000 ՀՀ դրամ. ընդամենը 1.600.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ. (ՀՎՀՀ 02655115) 13.01.2017թ. կնքված թիվ 151937099 պայմանագրի հիման վրա:

Սուրբ Շողակաթ վանք

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.- 1.000.000 և 2019թ.- 1.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 2.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ. 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ 201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 0289994.:


-Նախատեսվում է ջրի մատակարարում 2018թ.-800.000 ՀՀ դրամ և 2019թ.- 800.000 ՀՀ դրամ. ընդամենը 1.600.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ., (ՀՎՀՀ 02655115), 13.01.2017թ. կնքված թիվ 151931107 պայմանագրի հիման վրա:

Սուրբ Խոր Վիրապ վանք

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.- 3.000.000 և 2019թ.-3.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 6.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ. 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ 201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 8001178:

Սուրբ Գեղարդավանք

		2019թ.-3.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 6.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 6130045: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.-20.000.000 և 2019թ - 20.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 40.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 5282398, 530550: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2018թ.- 100.000.000 ՀՀ դրամ և 2019թ.-100.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր 200.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ., (ՀՎՀՀ201520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա. Հավելված N 4. քարտի համար՝ 6232, 0290208.: - Նախատեսվում է գազի մատակարարում 2018թ.- 90.000.000 ՀՀ դրամ և 2019թ. 90.000.000 ՀՀ դրամ. ընդամենը 180.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.:(ՀՎՀՀ 00046317), 10.11.2015թ. կնքված թիվ 08311157161 պայմանագրի հիման վրա: - Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 2018թ.- 338.692 ՀՀ դրամ և 2019թ.- 338.692 ՀՀ դրամ. ընդամենը 677.384 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ, (ՀՎՀՀ 00930884), 01.10.2017թ. կնքված թիվ 07647 պայմանագրի հիման վրա: - Նախատեսվում է ջրի մատակարարում 2018թ.-30.000.000 ՀՀ դրամ և 2019թ.- 30.000.000 ՀՀ դրամ . ընդամենը 60.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ., 13.01.2017թ. կնքված թիվ 150995043 պայմանագրի հիման վրա:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Էջմիածնի և Երևանի քաղաքապետարանների հետ::
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1185 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)
քաղ. երևան

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 01.1/14-2/23899-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/23050-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54194-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Շիրակի թեմի կողմից իրականացվող՝ 39,138,120 դրամ արժողությամբ «Շիրակի մարզի Սարագյուղ գյուղի եկեղեցու կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Շիրակի թեմի (ՀՎՀՀ՝ 05503942) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N 01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 39,138,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Շիրակի թեմին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպությանը՝ կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր, Յոն, Սուրբ Էջմիածին
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Սուշիկ Մանուկյան
08 դեկտեմբեր 2017թ.

Շիրակի մարզի Սարագյուղ գյուղի եկեղեցու կառուցում

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Շիրակի մարզի Սարագյուղ գյուղի եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակի թեմ, ՀՎՀՀ 05503942 :
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի Մարզ: Եկեղեցաշինական
6.	Ծրագրի բյուջեն	39.138.120 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործությունն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբնակությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	30 նոյեմբեր, 2017 – 31 օգոստոս, 2018թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Շիրակի մարզի Սարագյուղ գյուղի եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները, որի գումարը կազմում է 39.138.120 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Մայիստակ, Մ. Ավետիսյան 274, (ՀՎՀՀ 06800406), պայմանագիր կնքված 30.11.2017թ. : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 30 նոյեմբեր, 2017 – 31 օգոստոս, 2018 թ. :
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Շիրակի մարզի Սարագյուղ գյուղի եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքներ, որի գումարը կազմում է 39.138.120 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Շիրակի Մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն կայր Մայր, Յոն, Սուրբ Էջմիածին ճարտարապետական և ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1186 - Ա
քաղ. Երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 01.114-2/23904-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54351-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով ծիսական մոմի արտադրության համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված պարաֆինի (22,270 կգ ընդհանուր քաշով, 33,002 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1187 - Ա
քաղ. երևան**


**«ԿԻՍԱՔԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 01.1/14-2/23595-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱՊ/ԱՆՄ-2-1/13462-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 06/3-8/54030-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ից «Ընտանիքի փրկության» հիմնադրամի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (35 տեղ, 806 կգ ընդհանուր քաշով, 1025 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՄԿ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:


3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի ցանկ

Անվանում	Քաշ	Արժեք
Հագուստ մեծահասակների (օգտագործված)	755.3 կգ	330 ԱՄՆ դոլար
Հագուստ (նոր)	25.3 կգ	100 ԱՄՆ դոլար
Հաշմանդամների համար նախատեսված սայլակներ (2 հատ)	25.4 կգ	70
	806 կգ	Ընդհանուր 525 ԱՄՆ դոլար



«Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Հրաչյա Մուրադյան

Կ.Տ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1188 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Մայրի» հասարակական կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 01.1/14-2/23897-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 06/3-8/54014-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Է.**

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա, 2016 թվականի նոյեմբերի 14-ի Մ-1074-Ա և դեկտեմբերի 23-ի Մ-1205-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1201-Ա
քաղ. երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱ-
ՆԱՑՎՈՂ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-
ՆԵՐԻՆ ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ (2-ՐԴ ՓՈԽԼ)» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմ-
բերի 22-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ.
Տաշիր, Զահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 1,566,680 դրամ ընդհանուր
արժողությամբ «Լոռու մարզի դպրոցներին և մանկապարտեզներին քաղցրավենիքի տրա-
մադրում (2-րդ փուլ)» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանա-
գրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և
դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2017 թվականի դեկտեմբերի 21-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղցրավենիքի մատա-
կարարում՝ 1,466,680 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա
ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգում նախատեսված հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություն-
ներ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումով սահմանված պայմանների Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե, Հանրապետության կառավարության Լոռու մարզպետին և Ավանդող քաղա-
քապետերին:

ՆԱԽԱԳԱ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
նախագահի կողմից
(արձանագրություն թիվ 26/17)
2017 թ.
հիմնադրամի տնօրենի կաշտակատար
Աշոտ Վարդանյան

«Լոռու մարզի դպրոցներին և մանկապարտեզներին քաղցրավենիքի տրամադրում (2-րդ փուլ)» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Լոռու մարզում աղցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, արթատության բարձր շեմն ու կարիքավոր ընտանիքների երեխաների սննդակարգում քաղցրավենիքի ցածր մակարդակը հիմք ընդունելով տարածաշրջանի դպրոցներին ու առկայությունը հաշվի առնելով պարենային օգնություն տրամադրելը:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուղքերի և այլ պարտավոր վճարների զեղով արտոնություններին:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Զահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Զահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ:
6.	Ծրագրի բյուջեն	1 566 680 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի և հարակից գյուղերի մանկապարտեզների սանձերը, 1-ից 4-րդ դասարանի երեխաները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 27-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Փաթեթավորված տուփերի ձեռք բերում և բաշխում՝ 1 466 680 դրամ, 2. կազմակերպչական ծախսեր բեռնափոխադրումներ իրականացնելու համար՝ 100,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 27.12.2017թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է Գրանդ Քենդի ՄՊԸ-ից ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ՝ 1 466 680 դրամ :
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսվում է 100,000 դրամի չափով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Ալավերդի քաղաքի համայնքապետարան, տարածաշրջանի գյուղապետարաններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Համագործակցության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի կողմից կատարվող հաշվառման, ծրագրի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի համայնքապետարանի կողմից: Համագործակցության կառավարության բարեգործական ծրագրերի իրականացման համաձայնողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1202 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ի նիստին)
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ N 2 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 01.1/14-2/24275-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 06/3-8/55130-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ղ-Տեխկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N 19223028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տվյալների փոխանցման և շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1203 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 01.1/14-2/24296-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 06/3-8/54905-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետևանքով դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Յուրոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2016 թվականի նոյեմբերի 22-ին կնքված N 132/22/11/2016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի օգոստոսի 27-ին կնքված N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի

հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված N 115080665/S4004016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1204 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)
քաղ. երևան

**ՄԱՅՐ ԱԶՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅՈՐԴԱՑ ՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 01.1/14-2/24147-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/23054-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 06/3-8/55136-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 113,162,390 դրամ արժողությամբ «Հայորդաց տների տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արաբկիրի, Մալաթիայի, Նոր-Նորքի և Էջմիածնի հայորդաց տներին 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 29,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 19-ին կնքված՝ N 20029 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի

դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի փետրվարի 23-ին կնքված՝ N 120656 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրու հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 003519 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2016 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 013.01.16.0947 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արաբկիրի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 12,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2016 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 016.01.16.0947/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մալաթիայի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2016 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 017.01.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Նոր Նորքի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 8,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

8) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N 08311157161 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Էջմիածնի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 12,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

9) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N 021111410157 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

Գյումրու հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 12,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 03104144739 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 8,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2017 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N 131 10 17 11676 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 10,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի օգոստոսի 4-ին կնքված՝ N 112756191 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արաբկիրի, Մալաթիայի և Նոր Նորքի հայորդաց տների 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայության մատուցում՝ 1,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

13) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N 114521344 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Էջմիածնի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայության մատուցում՝ 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

14) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի մարտի 10-ին կնքված N 442 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայության մատուցում՝ 200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

15) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 112957612 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայության մատուցում՝ 400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

16) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07641 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արաբկիրի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 272,402 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

17) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07646 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մալաթիայի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 296,948 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


18) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07650 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Նոր-Նորքի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 572,636 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

19) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07640 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Էջմիածնի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 592,552 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

20) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N Կ.15-0269 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 122,138 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

21) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07644 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրու հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 265,946 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


22) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 07645 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը



ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 339,768 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



Հայրենիք տների տնտեսական պայմանների բարելավում

Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարելավել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայրենիք տների (1. Արաբկիր, 2. Մալաթիա, 3. Նոր-Նորք, 4. Էջմիածին, 5. Աշտարակ, 6. Գյումրի, 7. Վանաձոր) սաների ուսումնակրթական պայմանները, որտեղ նրանք կրթվում և դաստիարակվում են ազգային եկեղեցական ոգով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	1. ՀՀ, ք. Երևան, Զ. Ներսիսյան 14.2. ՀՀ, ք. Երևան, Մեքաստիա 32/2 3. ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 7-րդ գնդված 4. ՀՀ, ք. Էջմիածին, Բսի 1 և Մուլին 5. ՀՀ, ք. Աշտարակ, Միսակյան, 6. ՀՀ, ք. Գյումրի. Օգանյան 1, 7. ՀՀ, ք. Վանաձոր, Մաշտոցի 116: Բնագավառ՝ Տնտեսական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 113.162.390 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ 2018թ. 56.581.195 ՀՀ դրամ 2019թ. 56.581.195 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր, 2019թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրենիք տների էլեկտրաէներգիայի և գազի մատակարարում, գազի տեխնիկական սպասարկում և հեռախոսակապ: Արաբկիր Հ/Տ, Մալաթիա Հ/Տ, Նոր-Նորքի Հ/Տ, Էջմիածնի Հ/Տ, Աշտարակի Հ/Տ, Գյումրիի Հ/Տ, Վանաձոր Հ/Տ Էլեկտրաէներգիա մատակարարում- 42.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Գազի մատակարարում- 66.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Գազի տեխնիկական սպասարկում -2.462.390 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Հեռախոսակապ- 2.700.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ Ընդհանուր -113.162.390 ՀՀ դրամ առանց ԱԱՀ Ծրագրի իրականացման տևողությունը 01 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր, 2019թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է, Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արաբկիրի Հայրենիք տներ - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 6.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր 2019թ. (ՀՎՀՀ 01.08.2013 թ. կնքված թիվ ԳՊ0054 պայմանագրի հիման վրա: - Նախատեսվում է գազի մատակարարում 12.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ 1

հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317) հետ 01.01.2016թ. կնքված թիվ N 01301160947 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 272.402 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00930884) 01.10.2017թ. կնքված թիվ 07641 պայմանագրի հիման վրա:

-Հեռախոսակապի տրամադրում, պայմանագիր N 112756191 (ՀՎՀՀ 02500052), 600.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Մալաթիայի Հայորդյաց Տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 4.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 01520882) 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի մատակարարում 4.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317) կնքված թիվ N 01601160947/2 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 296.948 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ. (ՀՎՀՀ 00930884) , 01.10.2017թ. կնքված թիվ 07646 պայմանագրի հիման վրա:

-Հեռախոսակապի տրամադրում, պայմանագիր N 112756191 (ՀՎՀՀ 02500052), 500.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Նոր-Նորքի Հայորդյաց տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 9.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 01520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի մատակարարում 8.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), կնքված թիվ N 0170116 . 01.01.2016թ.պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 572.636 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ. (ՀՎՀՀ 00930884), 01.10.2017թ. կնքված թիվ 07641 պայմանագրի հիման վրա:


-Հեռախոսակապի տրամադրում, պայմանագիր N 112756191 (ՀՎՀՀ 02500052), 500.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Էջմիածնի Հայորդյաց տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 10.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 01520882), 01.08.2013 թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի մատակարարում 12.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), կնքված 10.11.2015թ. թիվ N 08311157161 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 592.552 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ. (ՀՎՀՀ 00930884) 01.10.2017թ. կնքված թիվ 07640 պայմանագրի հիման վրա:



11.

Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

05.10.2009թ. ՀՎՀՀ 02500052), 500.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Աշտարակի Հայորդյաց տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 4.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 01520882) 19.05.2008 թ. կնքված թիվ N 20029 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի մատակարարում 10.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), կնքված 10.11.2015թ. թիվ N 021111410157 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 122.138 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ. 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ. (ՀՎՀՀ 00930884) հետ 01.10.2017թ. կնքված թիվ Կ.15-0269 պայմանագրի հիման վրա:

-Հեռախոսակապի տրամադրում պայմանագիր N 442՝ (ՀՎՀՀ 02500052), 200.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Գյումրու Հայորդյաց Տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 5.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ. (ՀՎՀՀ 01520882) 23.02.2015 թ. կնքված թիվ N 120656 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի մատակարարում 12.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), կնքված 10.11.2015թ. թիվ N 021111410157 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 265.946 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00930884), 01.10.2017թ. կնքված թիվ 07644 պայմանագրի հիման վրա:

Վանաձորի Հայորդյաց Տուն

- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 4.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: 1 հունվար, 2018թ - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 01520882), 11.12.2008 թ. կնքված թիվ N 003519 պայմանագրի հիման վրա:


- Նախատեսվում է գազի մատակարարում 8.000.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ 1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00046317), կնքված 01.04.2014թ. թիվ N 021111410157 պայմանագրի հիման վրա:

- Նախատեսվում է գազի տեխնիկական սպասարկում 339.768 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ.1 հունվար, 2018թ. - 31 դեկտեմբեր 2019թ.: (ՀՎՀՀ 00930884), 01.10.2017թ. կնքված թիվ 07645 պայմանագրի հիման վրա:

-Հեռախոսակապի տրամադրում, պայմանագիր N 112957612՝ (ՀՎՀՀ 02500052), 400.000 ՀՀ դրամ արժեքով՝ առանց ԱԱՀ:

Այլ ծախսեր նախատեսված չեն

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա- վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Էջմիածնի և Երևանի Քաղաքապետարանների հետ: ԼՂ. 16/10
13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Օրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1205 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 01.1/14-2/24152-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/23051-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21 -ի N 06/3-8/54361-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 600,000 դրամ արժողությամբ «Մանրանկարչության Արվեստի կենտրոնի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N 008436 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի օգոստոսի 4-ին կնքված՝ N 112756191 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի
Վարչապետական բաժնի տնօրեն
Սոֆյա Եղիսյանի Բարձրագույն
18 դեկտեմբեր, 2017թ.

Մանրակարչության Արվեստի Կենտրոնի տնտեսական պայմանները բարելավում

Մ Ր Ա Գ Ի Ր

13.

Ծրագրի
արդյունավետության
նկատմամբ
վերահսկողության
մեխանիզմների
նկարագրություն

Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնիների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարելավել Մանրակարչության Արվեստի Կենտրոնի սաների ուսումնակրթական պայմանները: Կենտրոնում սաները հաղորդակից են լինում համաշխարհային արվեստներին և արհեստներին, որի միջոցով բացահայտվում են սաների ունակությունները ու նախասիրությունները, տրվում է նախնական և մասնագիտական կրթություն:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ք. Երևան, Քանաքեռ 6-րդ փողոց.29 տուն, տնտեսական:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 600.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ
7	Բարեգործություն ստացողը	Քանաքեռ- Զեյթուն համայնքի 5-18 տարեկան մոտ 70 շնորհալի երեխաներ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 հունվար, 2018թ. – 31 դեկտեմբեր, 2018թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մարանկարչության Արվեստի Կենտրոնի սաներին ապահովել էլեկտրաէներգիայով և հեռախոսակապով՝ 600.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվար 2018- 31 դեկտեմբեր 2018թ. - էլեկտրաէներգիայի մատակարարում « Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Հյուսիս» մասնաճյուղի կողմից, պայմանագիր N 008436՝ կնքված 18.07.2008թ.,(ՀՀ ք. Երևան, Քոչարի փող. 13ա. ՀՎՀՀ01520882) 400.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ. - Հեռախոսակապը տրամադրում է «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ -ի կողմից, պայմանագիր N 112756191(ՀՀ ք. Երևան,Ահարոնյան 2, ՀՎՀՀ02500052). 200.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է, Մարանկարչության Արվեստի Կենտրոնի սաներին ապահովել էլեկտրաէներգիայով և հեռախոսակապով՝ 600.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվար 2018- 31 դեկտեմբեր 2018թ.:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Երևանի քաղաքապետարանի հետ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1206 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N Մ-529-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 01.1/14-2/24034-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/54205-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 479 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 30-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն» ծրագրի մասին» N Մ-529-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշման 1-ին կետի «41,234,080 դրամ» բառերը փոխարինել «42,637,413 դրամ» բառերով:

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀՎՀՀ՝ 00006023) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միֆիե Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 582,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական կարմիր խաչի ընկերության
Ամենա եղիագարյամբ կողմից
25.12.2017 թ.



Գլխավոր քարտուղար
Գրառարար

«Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն»
Օ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Թիրախ մարզերում առավել խոցելի տարեցների, հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց առողջության և կյանքի որակի բարելավում
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով
3. Բարեգործը	Շվեյցարական կարմիր խաչ
4. Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, Պարտյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Լոռու, Շիրակի, Արմավիրի և Արարատի մարզեր, սոցիալ-առողջապահական ոլորտ
6. Ծրագրի բյուջեն	42 637 413 ՀՀ դրամ
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու, Շիրակի, Արմավիր, Արարատի մարզերի մոտ 260 առավել խոցելի տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2017 մայիսի 1-ից - 2018 հունիսի 30-ը
9. Ծրագրի նպատակը	Ծրագիրն ունի հետևյալ անկախ արդյունքները՝ 1. Շիրակի և Լոռու մարզերում ինտեգրացված տնային խնամք ստացող շահառուների ապահովում որակյալ և բավարարող սննդով (սննդային փաթեթներ) 2. Արարատի և Արմավիրի մարզի միայնակ տարեցների ապահովում տաք կերակուրով՝ շաբաթը 5 օր 3. ՀՎՀՀ Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզային

մասնաճյուղերի ռեսուրսների, այդ թվում՝ մարդկային, բարելավում՝ տարեցներին ուղղված ծրագրերի իրականացման, կամավորների հավաքագրման և համայնքում հեղինակության բարձրացման նպատակով

Ծրագրի շրջանակներում՝ ըստ վերը նշված ակնկալվող արդյունքների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝

1. Շիրակի և Լոռու մարզերում ինտեգրացված տնային խնամք ստացող շահառուների ապահովում որակյալ և բավարար սննդով (սննդային փաթեթներ)

Տնային խնամողների միջոցով Լոռու և Շիրակի մարզերում ինտեգրացված տնային խնամք ստացող տարեցներին, հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց ամիսը 1 անգամ սննդային փաթեթներով ապահովում

Տևողությունը 2017 թ հուլիսի 1 ից 2018 հունիսի 30 -ը

Ընդհանուր բյուջեն 7.920.000 ՀՀ դրամ

2. Արարատի և Արմավիրի մարզի միայնակ տարեցների ապահովում տաք կերակուրով՝ շաբաթը 5 օր


Արարատի և Արմավիրի մարզերում գթության ճաշարանների հիմնում և կահավորում

Ճաշացանկի կազմում, սննդամթերքի ձեռք բերում և պահեստավորում
Արարատի և Արմավիրի մարզեր մոտ 200 միայնակ տարեցների ապահովում տաք կերակուրով, շաբաթը 5 օր

Տևողությունը 2017 թ հուլիսի 1 ից 2018 հունիսի 30 -ը

Ընդհանուր բյուջեն՝ 29 984 000 ՀՀ դրամ:

3. ՀԿԽԸ Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի ռեսուրսների, այդ թվում՝ մարդկային, բարելավում՝ տարեցներին ուղղված ծրագրերի իրականացման, կամավորների հավաքագրման և համայնքում



հեղինակության բարձրացման նպատակով

Ներառում է գթության խոհանոցներում փոքրածավալ վերանորոգման աշխատանքներ, աշխատակիցների և կամավորների ճանապարհածախս:


Տևողությունը 2017 թ մայիսի 1 ից 2018 հունիսի 30 -ը

Ընդհանուր բյուջեն՝ 2 352 000 ՀՀ դրամ

Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ ինչը ներառում է գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիքի ծախսեր՝ 1 833 413 ՀՀ դրամ արժողությամբ և կոմունալ վճարներ՝ 548.000 ՀՀ դրամ արժողությամբ:

Տևողությունը 2017 թ մայիսի 1 ից 2018 հունիսի 30 -ը

Ընդհանուր բյուջեն՝ 2 381 413 ՀՀ դրամ,



10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

1. Շիրակի և Լոռու մարզերում ինտեգրացված տնային խնամք ստացող շահառուների ապահովում որակյալ և բավարար սննդով (սննդային փաթեթներ)

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 7.920.000 ՀՀ դրամ:


2. Արարատի և Արմավիրի մարզի միայնակ տարեցների ապահովում տաք կերակուրով՝ շաբաթը 5 օր

Սննդամթերքի ձեռք բերում՝ 20.558.759 ՀՀ դրամ


խոհանոցային սպասքի պարագանների, տեխնիկական միջոցների և կահույքի ձեռք բերում 1.828.000

Կոմունալ վճարներ 548.000

3. ՀԿԽԸ Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի ռեսուրսների բարելավում՝ տարեցներին ուղղված ծրագրերի իրականացման, կամավորների հավաքագրման և համայնքում հեղինակության բարձրացման նպատակով



		Արարատի և Արմավիրի մարզերի գթության խոհանոցների պահպանման և վերնորոգման ծախսեր՝ 1.692.000 Մեքենաների վառելիք՝ 1 833 413
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 2 381 413 ՀՀ դրամ, ներառում է գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիքի ծախսեր և կոմունալ վճարներ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի մարզպետարաններ, Արարատի, Արմավիրի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Շվեյցարական Կարմիր խաչին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ համաձայն սահմանված կարգի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
27 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1207- Ա
քաղ. երևան
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 18ի N 01.1/14-2/23601-17, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N ՊՆ/510-1921-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 04/07-1/17911-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 06/3-8/54016-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Անգլիայից «Հայրենիք» ռազմահայրենասիրական հիմնադրամի միջոցներով գնված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի՝ (սարքավորումներ՝ 130,812.29 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

dr-16/18.3

«Վայկոն» կազմակերպության սարքավորումների
նկարագրությունների թարգմանությունները

Optical position / movement recording Vero System
Դիրքը/շարժումը գրանցող «Վերո» (Vero) օպտիկական համակարգ

1. Vicon Vero 2.2 Camera (Tax Code HTC 9031.80.8000)
«Վայկոն» Վերո 2.2 տեսախցիկ
2. 30m Vicon Camera Cable with Ferrite (Tax Code 8544.42.1000)
30մ «Վայկոն» տեսախցիկի ֆերիտային միջուկով մալուխ
3. 8 Port PoE Switch (HW:V3.0R)
8 բնիկային ՊոԵ կոմուտատոր
4. Level One 16-Port non-PoE Gigabit Switch
Առաջին մակարդակի 16 բնիկային ոչ ՊոԵ գիգաբիթանոց կոմուտատոր
5. PC Patch cord Cat 5e FTP PVC 5m Grey (Tax Code HTC 9031.80.8000)
Համակարգչի 5 մետրանոց մոխրագույն Քեթ 5ե ՖթՊ ՊՎՍ բաժանիչային հաղորդալար
6. Mains Cable (European) (Tax Code HTC 9031.80.8000)
Էլեկտրական սնման մալուխ (Եվրոպական)
7. Vicon Tracker 3.0 Single Seat Network Soft (Tax Code HTC 9031.80.8000)
«Վայկոն» հետևող համակարգի 3.0 ցանցային ծրագրային փաթեթ՝ մեկ նստատեղի համար
8. Active Wand v2 IR (inc. Li-Ion Battery) (Tax Code HTC 9031.80.8000)
«Ակտիվ վոնդ վ2 ԻՌ» ստուգաճշտման (կալիբրովկայի) սարք
9. Tracker Accessory Kit (Tax Code HTC 9031.90.0000)
Հետևող համակարգի օժանդակ սարքերի հավաքածու
10. Pearl 9.5mm Hard Marker M4 Threaded on 17 mm (Tax Code 9031908090)
9.5մմ տրամագծով մարգարտագույն կոշտ մարկերների հավաքածու, Մ4 պարուրակով՝ տեղադրված 17 մմ-անոց պլաստիկ հարթակի վրա
11. Pearl 14mm Hard Marker M4 Threaded on 17mm (Tax Code 9031908090)
14 մմ տրամագծով մարգարտագույն կոշտ մարկերների հավաքածու, Մ4 պարուրակով՝ տեղադրված 17 մմ-անոց պլաստիկ հարթակի վրա

dr-16/12.3

12. Pearl 19mm Hard Marker, M4 Threaded, 17mm (Tax Code HTC 9031.90.0000)
19մմ տրամագծով, մարգարտագույն կոշտ մարկերների հավաքածու, Մ4 պարուրակով՝ տեղադրված 17 մմ-անոց պլաստիկ հարթակի վրա

13. 25.4mm Hollow Hard Marker, M4 Threaded (Tax Code 9031908090)
25.4 մմ տրամագծով, սնամեջ կոշտ մարկերների հավաքածու, Մ4 պարուրակով՝ տեղադրված 17 մմ-անոց պլաստիկ հարթակի վրա

14. Manfrotto 492 Microball Camera Mount head M (Tax Code 9033.00.00.00)
Տեսախցիկի տեղադրման միկրոգնդիկային Մանֆրոտո 492 գլխիկ

15. Super Clamp Plus Stud (Tax Code 9033.00.00.00)
«Սուպեր Պլյուս» ամրակ (սեղմակ)

16. PC System "Standard" (Tax Code 8471.41.0090)
«Ստանդարտ» համակարգչային համակարգ

17. Mains Cable (European) (Tax Code HTC 9031.80.8000)
Էլեկտրական սնման մալուխ (Եվրոպական)
)

18. Vicon Welcome Pack (Tax Code 4819100000)
«Վայկոն» համակարգի փաստաթղթերի ուղեկցող փաթեթ

